# ԱՐՈՒԵՍՏԻ ՄԵԿՆԱԲԱՆՆԵՐ
# ՄԱՐԻՆԱ ՍԱՄՍՈՆԵԱՆ ԵՒ ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹԵԱՆԸ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՆ ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԱՐՈՒԵՍՏԸ

**... Եթէ կայ իսկական արուեստ, իսկական որակ, եթէ կայ հոգի, սէր, անկեղծութիւն, սա արդէն ժամանակակից է եւ մենք բոլորս էլ դրա պահանջն ու կարիքն ունենք...**

**ՌՈՒԴՈԼՖ ԽԱՉԱՏՐԵԱՆ**

Եթէ գծանկարը այլ նկարիչների համար գեղարուեստական արտայայտչութեան հասնելու օժանդակ միջոց է, ապա Խաչատրեանի արուեստում այն փունկցիոնալ անկախութիւն եւ ինքնուրոյնութիւն է ստացել: Դասական կատարեալ գծանկարը արուեստագէտի ստեղծագործութեան մէջ համատեղւում է ժամանակակից մտածողութեան եւ պատկերաւորութեան հետ: Եթէ հայ նկարիչները մեծ մասամբ յուզական յագեցուածութեան են հասնում գունային բարդ համադրութիւններով, ապա Խաչատրեանը կարողանում է արտայայտել ամենանուրբ զգացումներ ու յոյզեր՝ աշխատելով միայն մէկ գոյնի մատիտով: Նախընտրելով հիմնականում դիմանկարի ժանրը, Խաչատրեանը ստեղծել է շատ արտայայտիչ կերպարներ: Նրանք մեզ յիշեցնում են Վերածննդի վարպետների ստեղծած հոյակապ կերպարները: Եւ այդ դէմքերը պատկանում են մեծ մասամբ մեր ժամանակակիցներին: Սրանով հանդերձ, նա ամենեւին էլ չի «զարդարում» իր մոդելներին: Գեղագէտի նուրբ նաշակը նրան թոյլ է տալիս իր շրջապատի մարդկանց մէջ տեսնել գեղեցիկը եւ այդ շրջապատի տեսանկիւնով ներկայացնել նրանց իր գործերում: Հոգեւոր հարուստ կեանք եւ ներքին նշանակալիութիւն կայ այդ դէմքերի վրայ: Անցողիկն ու անկայունը, մակերեսայինն ու անկարեւորը տեղ չունենն այստեղ: Ամենեւին էլ պարտադիր չէ, որ այդ մարդիկը ունենան իտէալական դիմագծեր: Նրա դիմանկարների հերոսներից իւրաքանչիւրն ունի իր անկրկնելի անհատականութիւնը: Նկարչի ստեղծագործութիւնը մշտապէս սնւում է անցեալ դարերի փորձով: Հին դրանով նկարիչը, կարծես, ցանկանում է հաւաստել, թէ մարդու էութիւնը դարերի ընթացքում, ի վերջոյ, նոյնն է մնում: Բացի այդ, հին տարազներն այդ ստեղծագործութիւններին որոշակի դեկորատիւ էֆեկտ են հաղորդում:

Խաչատրեանի նուրբ դասական գծանկարը հեռու է սենտիմենտալ-ռոմանտիկական տարտամ անորոշութիւնից: Յստակ գծագրուած մանրամասները ամենեւին էլ չեն խախտում ստեղծագործութեան ընդհանուր համաչափութիւնն ու ներդաշնակութիւնը, քանի որ դրանք ենթարկւում են հիմնական գաղափարին, եւ ջանադիր քննութեան դէպքում էլ կերպարները մնում են ամբողջական ու օրգանական: Խաչատրեանի գեղագիտական հայեացքների կայունութիւնը, յստակ մշակուած ձեռագիրը եւ ինքնօրինակ ձիրքը նրան հնարաւորութիւն տուեցին դառնալու հայ անուանի նկարիչներից մէկը: Նրա վաղ շրջանի ստեղծագործութիւններից անմոռանալի են Արու-Լալա Մահարու հիասքանչ դիմանկարը, «Ուսանողուհու» քնքուշ ու մաքուր դիմանկարը, լեզուաբան Մելքումեանի նուրբ թախիծով լի դիմանկարը, եւ, վերջապէս, «Իգիթեանի դիմանկարը»:

(Յապաւուած) ՄԱՐԻՆԱ ՍԱՄՍՈՆԵԱՆ

*Դասականներին հակվելու, նրանց մերձենալու, վարպետութեան գաղտնիքներն ըմբռնելու հնարաւորութիւնն ապացուցել կարող է միայն ստեղծագործական խենթութեամբ օժտուած երջանիկ անհատը: Պէտք է յարգանքով վերաբերուել եզակի վարպետներին, որոնք անցած ժամանակաշրջանների առջեւ հաստատում են մեր ժամանակի հեղինակութիւնը: Մենք կարող ենք հպարտանալ, որ մեր ժամանակակից Ռուդոլֆ Խաչատրեանն իր հաստատուն տեղն է գրաւել այդ անվերջանալի երթում:*

*Նկարչի մեթոդում միահիւսուած են անկաշկանդութիւնն ու խտացումը: Իւրաքանչիւր գիծը կատարուած է յուզմունքով, ապրումներով եւ սիրով: Դիմանկարի բնորդը դառնում է մասնակից, համահեղինակ, մարդ, որն ապրում է ստեղծագործութեան ողջ ընթացքով՝ առաջին գծից մինչեւ աւարտ: Նկարիչը ներքաշում է ինքն իր եւ միաժամանակ մոդելի մէջ, նա ոչ թէ պարզապէս աշխատում է, այլ ապրում, եւ յատկապէս այդ ստեղծագործական լարուածութեան մէջ են հանդէս գալիս նրա կեանքի կուլմինացիոն գագաթները, նրա կեցութեան իմաստը: Հաւանաբար, հէնց դա էլ երջանկութեան զգացողութիւնն է: Նոյնիսկ նկարուողին լաւ ճանաչելու դէպքում էլ նկարիչը քննախոյզ դիտում է, զրուցում, ուսումնասիրում, փնտրում առաւել ճշգրիտ վիճակ, շարժում, կեցուածք, հագուստ, կոմպոզիցիա: Վերջնական ճշգումից, յիշողու-*

Շար.ը տես էջ 26

Նոյեմբեր 12-16 «Էրեբունի» հրատարակչութեան կազմակերպութեամբ տեղի է ունենալու հայրենի նկարիչ՝ Ռուդոլֆ Խաչատրեանի ցուցահանդէսը Լոս Անճելըսի Heritage Gallery-ում: Նրա աշխատութիւններն արդէն ցուցադրուել են Տիթրոյթում Հոկտ. 17-20:

«Էրեբունի» հրատարակչութիւնը իր 15 տարիների գործունէութեան ընթացքում կազմակերպել է բազմաթիւ ցուցահանդէսներ, ներկայացնելով հայրենի նկարիչների արուեստը: Առաջին ցուցահանդէս-վաճառքը տեղի է ունեցել 1974-ին, Պէյրութի Gallery Modulart-ում, իսկ այնուհետեւ՝ Մարսէյլ, Փարիզ, Լոնտոն, Մոնթրէալ, Թորոնթօ, Տիթրոյթ, Լոս Անճելըս, Նիւ Եորք, Ուաշինկթըն եւ Հելսինքի:

«Էրեբունի» հրատարակչութեան նպատակն է հայրենի արուեստը ներկայացնել հայ եւ օտար հանրութեան:

Ռուդոլֆ Խաչատրեանը ծնուել է 1937 թուին, Երեւանում: Երիտասարդ տարիքում առիթ է ունեցել աշխատելու քանդակագործ Երուանդ Քոչարի հետ. նրա միջոցով իսկ ծանօթացել է Դա Վինչիի եւ Դիւրերի արուեստին, որոնց ազդեցութիւնը կարելի է գտնել իր ստեղծագործութեանց մէջ:

Ռուդոլֆ Խաչատրեանը այժմ ապրում է Մոսկուայում. անզամներ ցուցահանդէսներ է ունեցել թէ Սովետական Միութեան եւ թէ եւրոպական երկրների մէջ: 1960-ին ընտրուել է Ս.Ս.Հ.Մ.-ի Նկարիչների Միութեան անդամ եւ 1969-ին շահել է Կոմիտասի 100-ամեակի առիթով կազմակերպուած նկարչական առաջին մրցանակը: 1984-ին արժանացել է Հայաստանի ժողովրդական նկարիչի կոչումին:



Հենրիկ Իգիթեանի դիմանկարը, 1982



Լուսամուտի մօտ, 1982

վարպետների վեհաշուք կերտուածքները ոգեշնչել եւ մինչեւ այսօր էլ ոգեշնչում են նրան: Բայց եթէ ժամանակակից նկարիչների մեծամասնութեանը բնորոշ է նորի որոնման յախուռն տենչը, ապա Խաչատրեանի համար աւելի բնութագրական է արուեստի զարգացման պատմութեան վրայ հիմնուող գեղագիտական իտէալների կայունութիւնը: Դա արտայայտւում է ստեղծագործական ինչպէս ներքին կառուցուածքում, այնպէս էլ արտաքին տեսանելի զուգահեռներում: Այսպէս, ժամանակների կապը ցոյց տալու նպատակով նա իր կերպարներին զգեստաւորում է հին ժամանակների տարազներով.